

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

**14.11.2016թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Գ. Մարտիրոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Զ. Ավետիսյանը,

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հաշվետվություն հիդրոէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՀԷԿ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «Հաշվետվություն ջերմաէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՋԷԿ (տարեկան) հաշվետվության ձևը հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 23-Ն և 24-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

**Որոշեցին՝**

հաստատել՝ «Հաշվետվություն հիդրոէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՀԷԿ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և «Հաշվետվություն ջերմաէլեկտրակայանի գործունեության մասին» Ձև 1-ՋԷԿ (տարեկան) հաշվետվության ձևը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 23-Ն և 24-Ն որոշումները:

*/Նորմատիվ/*

2. «2017 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

հաստատել 2017 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

**3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի «Բուսաբուծական մթերքի արտադրություն» թիվ 1 (ամսական) ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները (տարածությունները) և համախառն բերքը» թիվ 1 (ամսական) հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

**Որոշեցին՝**

հաստատել՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները (տարածությունները) և համախառն բերքը» թիվ 1 (ամսական) հարցաթերթը և լրացման հրահանգը՝ համաձայն համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի: Ուժը կորցրած ճանաչել վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ««Բուսաբուծական մթերքի արտադրություն» թիվ 1 (ամսական) հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 68-Ա որոշումը:

*/Անհատական/*

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

4.1. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2016 թ.հոկտեմբերի 3-ից 14-ը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ինստիտուտի հրավերով «Եռամսյակային ազգային հաշիվներ (JV16.27)» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս. Խաչատրյան/*

4.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016թ հոկտեմբերի 11-ից 12-ը Միգրացիայի վերաբերյալ միջազգային երկխոսության (IDM) շրջանակում կայանալիք «Միգրացիային առնչվող Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) իրականացման գործընթացում առաջխաղացման գնահատումը» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ. Կոչումջյան/*

4.3. Հաղորդում՝ Բելառուսի Մինսկ քաղաքում 2016թ. հոկտեմբերի 18-ից 20-ը Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի հրավերով՝ «Գների վիճակագրություն» թեմայով ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների մասնակցությամբ կազմակերպված սեմինար-խորհրդակցությանն մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան/*

4.4. Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2016թ. հոկտեմբերի 26-ից 28-ը Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության և Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «Գյուղատնտեսական վիճակագրության մոդերնիզացումն աջակցելու Կայուն զարգացման օրակարգին» խորագրով գյուղատնտեսական վիճակագրության վերաբերյալ յոթերորդ միջազգային կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/*

4.5. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2016թ. հոկտեմբերի 27-ից 28-ը Եվրոպական հանձնաժողովի հրավերով արևելյան գործընկերության շրջանակում «Գների վիճակագրություն» թեմայով վիճակագրության փորձագետների խմբի չորրորդ խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Մ. Երիցյան, Գ. Պետրոսյան, Զ. Ավետիսյան/*

### **Որոշեցին՝**

**արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:**

*/Անհատական/*

**12.12.2016թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

- ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ.Արևշատյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Զ.Ավետիսյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը,
- ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ.Մարտիրոսովան,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը,
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմի որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը

## Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականությունը» և «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարությունը» հաստատելու մասին» հարցը:

*/Ջեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

## Որոշեցին՝

հաստատել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականությունը» և «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարությունը» համաձայն հավելվածների:

*/Անհատական/*

2. «Սպառողական ապրանքների և ծառայությունների գների (սակագների) մասին» Ձև 1-գին սպառողական (պարենային ապրանքներ), «Սպառողական ապրանքների և ծառայությունների գների (սակագների) մասին» Ձև 1-գին սպառողական (ոչ պարենային ապրանքներ, ծառայություններ) «Պետական վիճակագրական հարցաթերթերի ձևերը և լրացման հրահանգները հաստատելու», «Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման կարգը հաստատելու» և «Սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների հաշվարկման մեթոդաբանական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

*/Ջեկուցող՝ Զ.Ավետիսյան/*

## Որոշեցին՝

հաստատել «Սպառողական ապրանքների և ծառայությունների գների (սակագների) մասին» Ձև 1-գին սպառողական (պարենային ապրանքներ), «Սպառողական ապրանքների և ծառայությունների գների (սակագների) մասին» Ձև 1-գին սպառողական (ոչ պարենային ապրանքներ, ծառայություններ) «Պետական վիճա-

կագրական հարցաթերթերի ձևերը և լրացման հրահանգները հաստատելու», «Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման կարգը հաստատելու» և «Սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների հաշվարկման մեթոդաբանական ցուցումները համաձայն հավելվածների:

*/Անհատական/*

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի համաշխարհային ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

թույլատրել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի համաշխարհային ծրագրին տրանադրել 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան:

*/Անհատական/*

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության ոլորտի գործառնական խմբի տնտեսագետ Մորից Մեյերին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

**թույլատրել Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության ոլորտի գործառնական խմբի տնտեսագետ Մորից Մեյերին տրանադրել 2015 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան:**

*/Անհատական/*

**Լսեցին՝**

**5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

5.1. Հաղորդում՝ Կորեայի Դայջոն քաղաքում 2016 թվականի հոկտեմբերի 10-ից 12-ը Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության արտադրության և տարաբնույթ սպառողների շրջանում տվյալների տարածումը, երկրների միջև փորձի փոխանակումը, աշխատանքային միգրացիայի վիճակագրության վերջին միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը թեմայով աշխատանքներին հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

5.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 2-ից 4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «ԲԶՄՀ առընչվող ցուցանիշների ինտեգրումը տարածաշրջանային և ազգային մակարդակով Կայուն զարգացման նպատակների դիտարկման և համապատասխանեցման գործընթացում» խորագրով տարածաշրջանային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

5.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում 2016 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը «ԱՊՀ երկրներում աղքատության վիճակագրության ներդաշնակեցման վերաբերյալ բարձր մակարդակի» եռօրյա սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Միրզոյան, Դ.Մարտիրոսովա/*



5.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 9-ից 11-ը Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) և Նորվեգիայի վիճակագրության կողմից համատեղ կազմակերպված «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար պաշտոնական վիճակագրության համար բիզնես հետազոտությունների մշակում և իրականացում» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ.Թորոսյան, Մ.Պեպրոսյան/*

5.5. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 14-ից 18-ը ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերության վիճակագրության արտադրանքի և ծառայությունների արդիականացում կայուն զարգացման նպատակների շրջանակում» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/*

5.6. Հաղորդում՝ Չեխիայի Պրահա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 15-ից 16-ը Արևելյան գործընկերության Պլատֆորմ 2-ի 2014-2017թթ. աշխատանքային ծրագրի (Ծրագիր) շրջանակում կազմակերպված «Շուկայական տնտեսության անցումը և աշխատանքի շուկայում պահանջարկի կանխատեսումը: Չեխիայի Հանրապետության և Արևելյան գործընկերության երկրների փորձը և դասերը» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

5.7. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 17-ից 18-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Եվրոպայի Շրջակա միջավայրի մշտադիտարկման և գնահատման ծրագրի հրավերով «Շրջակա միջավայրի վիճակագրության և ցուցանիշների միասնական նպատակային խմբի» /ՇՄՅՎՄՆԽ/ 12-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/*

5.8. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 21-ից 22-ը Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից կազմակերպվող «Անկանոն միգրացիայի, ռեադմիսիայի ընդհանուր ռազմավարության, իրավապայմանագրային դաշտի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Վրաստանի փորձին», ինչպես նաև ներքին տեղահանվածների, տարհանվածների և փախստականների հարցերով երկրում իրականացվող ծրագրերին ու իմիգրացիոն տվյալների միասնական համակարգին ծանոթանալու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան /*

5.9. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 21-ից 22-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վիճակագրական մեթատվյալներ» խորագրով խորացված դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ռ. Շաբոյան, Հ. Եղիազարյան, Ա. Գրբոյան/*

5.10. Հաղորդում՝ Չեխիայի Պրահա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 21-ից 25-ը Չեխիայի վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Հանդիպումներ գյուղատնտեսության վիճակագրության և գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ» աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս. Մնացականյան, Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Ա. Սաֆյան, Ա. Հայրապետյան, Վ. Գևորգյան, Ա. Ավագյան, Կ. Ներսիսյան/*

5.11. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 29-ից 30-ը Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի Շրջակա միջավայրի գործակալության (ԵՇՄԳ) հրավերով «Եվրոպայի Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ-II (ԵՇՄՄՏՀ -II)» Ծրագրի ղեկավար կոմիտեի առաջին նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

### **Որոշեցին՝**

**արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:**

*/Անհատական/*

**22.12.2016թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԻՆ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԻՆ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԻՆ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն.Մուշեղյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,

**Լսեցին՝**

**1.«2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:**

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

**Որոշեցին՝**

**հաստատել «2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:**

/Նորմատիվ/

**2.«Կազմակերպություններում վաստակի կառուցվածքի փորձնական հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները հաստատելու մասին» հարցը:**

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

**Որոշեցին՝**

**հաստատել «Կազմակերպություններում վաստակի կառուցվածքի փորձնական հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները համաձայն հավելված 1-ի և 2-ի:**

/Անհատական/

**3.«Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները հաստատելու մասին» հարցը:**

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

**Որոշեցին՝**

հաստատել «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը լրացման ցուցումները» համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի «Աշխատուժի հետազոտության հարցաթերթը և լրացման ցուցումները հաստատելու մասին» թիվ 39-Ա որոշումը:

/Անհատական/

**4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 26-ն և 2013 թվականի մայիսի 3-ի թիվ 02-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:**

/Զեկուցող՝ Վ.Սարոյան/

**Որոշեցին՝**

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 26-Ն և 2013 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսական համատարած հաշվառման գործառնական ստորաբաժանում ստեղծելու և դրա կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշումները:

/Նորմատիվ/